«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի

ՈՐՈՇՈՒՄ
1 Հուլիսի 2022, N 13 - 12

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հրատարակչական կարիքների համար լեզուների ամբիոնին արտաժամյա բեռնվածություն սահմանելու մասին

Լսելով և քննարկելով Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կայքում հրապարակվող նյութերի եռալեզու հրատարակման, «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդեսի և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հրապարակումների եռալեզու հրատարակման նպատակով անգլերենով և ռուսերենով նյութերի մշակման և խմբագրական աշխատանքների ծավալի մեծացմամբ պայմանավորված լեզուների ամբիոնին արտաժամյա բեռնվածություն սահմանելու մասին հարցը՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Համալսարանի լեզուների ամբիոնին տրամադրել 700 ժամ՝ անգլերեն նյութերի և 480 ժամ՝ ռուսերեն նյութերի հրատարակման և խմբագրման աշխատանքների իրականացման համար:

2. Տրամադրված 700 ժամը ներառել անգլերենի ոչ լսարանային ժամերի, իսկ 480 ժամը՝ ռուսերենի ոչ լսարանային ժամերի բեռնվածության մեջ:

3. Հանձնարարել համալսարանի ուսումնական բաժնին՝ UMS հարթակում կատարել համապատասխան փոփոխությունները:

4. Սույն որոշման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դիանա Գալոյան**

2022 թ. հուլիսի 1
Երևան